

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Գիտելիքի և դպրության օրվա առիթով

Սիրելի՛ աշակերտներ, մանկավարժներ և ծնողներ,

Շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի և դպրության օրվա՝ սեպտեմբերի 1-ի
կապակցությամբ:

Մեր ժողովուրդն իր հազարամյա պատմության մեջ միշտ էլ պատկառանք է ունեցել
գիտելիքի և կրթության հանդեպ, այն համարելով ամենաարժեքավոր
հարստություններից մեկը: Կիրթ հասարակությունն է, որ ունի ավելի մեծ
հնարավորություններ՝ դիմակայելու ժամանակի մարտահրավերներին,
կազմակերպելու իր կյանքն ու բարեկեցությունը: Այս առումով սյունեցի
դպրոցականները ջանք ու եռանդ չեն խնայում գիտակրթական առաջընթացի հետ
կապված տարբեր ստուգատեսներում ձեռքբերումներ արձանագրելու համար, իսկ
մեդալակիրների թվով հանրապետությունում առաջինը լինելու փաստը վկայում է մեր
լեռնաշխարհի մարդկանց ու մեր ուսուցիչների ջանադիր աշխատանքի մասին:
Առանձնակի ջերմությամբ ուզում եմ շնորհավորել հատկապես առաջին
դասարանցիներին, ովքեր ճանաչողության և իմացության աշխարհ բացահայտելու
համար ոտք են դնում դպրոցական շեմին: Վստահ եմ, ուսումնառության ընթացքում
նրանց հաջողությունն ու հաղթանակը մեր երկրի կայացման գործում ամուր հիմնաքար
են դառնալու:

Սիրելի՛ դպրոցականներ, համոզված եմ, որ ուսման մեջ ձեր հաջողություններով
դուք ամրապնդելու եք մեր երկրի լուսավոր ու բարեկեցիկ ապագան:

Կրկին շնորհավորում եմ կրթության ոլորտի բոլոր ներկայացուցիչներին,
ցանկանում ուժ ու եռանդ:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

01 սեպտեմբերի 2016թ.